Հավելված
Գորիսի պետական համալսարանի
Գիտական խորհրդի 11.04. 2022թ.
թիվ 4 նիստի արձանագրային որոշման

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ (ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ) ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն քաղաքականությունը և ընթացակարգը կարգավորում են Գորիսի պետական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) դիմորդների մասնագիտական կողմնորոշման քաղաքականության հետ կապված իրավահարաբերությունները:
2. Սույն քաղաքականությունը և ընթացակարգը մշակված են համալսարանի ռազմավարական ծրագրի հիման վրա, քանի որ ընդունելության համակարգին վերաբերող նպատակները և խնդիրներն արտացոլված են համալսարանի ռազմավարական ծրագրում և ապահովում են տվյալ ռազմավարական ուղղության իրականացումը:
3. Ուսանողների ընդունելության իրականացումը նախատեսում է տվյալ գործընթացի նպատակների և լուծվող խնդիրների որոշումն ու սահմանումը:
4. Համալսարանի ընդունելության համակարգի ռազմավարական նպատակն է՝ ընդունելության կայուն համակարգի ստեղծումը, ամրապնդումը և կատարելագործումը, դիմորդների կայուն հոսքի ապահովումը՝ ուսանողական համակազմի համալրման ընդլայնումով: Համալսարանի ուսանողների ընդունելության քաղաքականության նպատակն է սահմանել ընթացակարգեր ու կանոններ՝ դիմորդների ընդունելությունն աշխատաշուկային համապատասխան մասնագիտություններով ապահովելու համար, որոնք կապահովեն տարածաշրջանի կազմակերպությունների համալրումը բարձրակարգ մասնագետներով: Հաշվի առնելով երկրում ժողովրդագրական բացասական միտումները, Սյունիքի մարզի սահմանամերձ կարգավիճակը և առկա մարտահրավերները՝ անհրաժեշտ է հստակ միջոցառումներ կիրառել բուհի ընդունելության համակարգի կատարելագործման և ուսանողական համակազմի անհրաժեշտ թվաքանակ ու բազմազանություն ապահովելու համար: Լրջագույն խնդիր է նաև ապահովել բնագիտական ուղղվածություն ունեցող առանձին խմբի մասնագիտություններով դիմորդների հավաքագրումը:

II. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

5. Համալսարանի ընդունելության համակարգի ստեղծում, ամրապնդում, զարգացում և կատարելագործում:
6. Ուսանողական համակազմի համալրման ընդլայնումով՝ դիմորդների կայուն հոսքի ապահովում:
7. Աշխատաշուկային համապատասխան մասնագիտության վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքագրում, ամփոփում և շահակիցներին ներկայացում:
8. Գնահատել դիմորդների կարիքներն ու նախասիրություններն ըստ մասնագիտական կողմնորոշման:

III. ԽՆԴԻՐՆԵՐԸ

9. Ընդունելության տեղերի թվի որոշում՝ ըստ մասնագիտությունների:
10. Դիմորդների հնարավոր համակազմի մասնագիտական կողմնորոշում:

_____/Կ.Ս.

11. Ընդունելության գործընթացի ապահովման համար տեղեկատվության ապահովման համակարգի զարգացում:

12. Դիմորդների նախասիրությունների և կողմնորոշման հետ կապված կարիքների բացահայտում:
13. Ուսումնական ստորաբաժանումների, ուսանողական կառույցների, գործատուների և այլ շահագրգիռ կազմակերպությունների ընդգրկումով՝ բուհի գովազդարշավի ընդլայնում և ակտիվացում:
14. Ճանաչողական այցերի, այլ միջոցառումների միջոցով հիմնական, միջնակարգ և ավագ դպրոցների աշակերտների հետ տարվող աշխատանքների ընդլայնում, դեպի բուհ մուտքը դյուրացնող միջոցառումների իրականացում:
15. Աշխատաշուկայի պահանջներին ու միտումներին համապատասխան՝ դիմորդների նախասիրությունների ու կողմնորոշվածության, կրթական կարիքների, արտաքին բարենպաստ հնարավորությունների, ներքին չօգտագործված կարողությունների գնահատման և դիմորդների թվաքանակի վերլուծության իրականացում:
16. Ուղենիշ ունենալով ՀՀ կրթության, գիտության ոլորտի զարգացման գերակայությունները, հաշվի առնելով մասնագիտությունների կանխատեսվող պահանջարկը և դրանց իրականացման համար անհրաժեշտ առկա դասախոսական, նյութատեխնիկական ներուժը՝ ըստ ուսուցման ձևերի՝ դիմորդների ընդունելության պլանավորում:
17. Հանրակրթական հաստատություններին բուհի մասնագիտությունները գովազդող նյութերի տրամադրում ՝ կազմակերպելով ապագա դիմորդների ճանաչողական այցեր համալսարան:
18. Գովազդային գործընթացում առավելագույնս ուսանողական կառույցների, հիմնական գործատուների և շահագրգիռ այլ կազմակերպությունների ներգրավում՝ներկայացնելով այսօրվա բուհն իր բոլոր առավելություններով և մասնագիտական հնարավորություններով:

IV. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

19. Գորիսի պետական համալսարան դիմորդների ընդունելությունը պետք է երաշխավորի ուսանողների հոսքի ավելացում և կայունության ապահովում՝
1) դիմորդների շրջանում տեղեկատվության ապահովման նպատակով գովազդային տեղեկատվական նյութերի տպագրություն.
2) ՁԼՄ-ներում հայտարարությունների հրապարակում,.
3) տարբեր տեղեկատվական նյութերով (ընդունելության հետ կապված կարգեր, տեղեկատվություն մասնագիտությունների վերաբերյալ, ստացվող որակավորումները և այլն) դպրոցներ այցելություն:

V. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

20. Նշանակությունը՝
1) Սույն կարգը որոշում է համալսարանի մասնագիտական կողմնորոշման գործունեության հիմնական ուղղությունները և բովանդակությունը՝ դիմորդներին ներգրավելու նպատակով: Սույն կարգի իրականացման համար պատասխանատու են համալսարանի ուսումնական մասը, ամբիոնները, մասնագիտական կողմնորոշման հանձնաժողովը, ԿՈԱ և ՈՒԿԱ ստորաբաժանումը և ռեկտորի հրամանով ստեղծված աշխատանքային խմբերը:
21. Ընդհանուր դրույթներ՝
1) Մասնագիտական կողմնորոշումը մասնագիտական ինքնորոշման գործում աջակցման հատուկ միջոցառումների համալիր է: Այն օգնում է անձին մասնագիտական կողմնորոշման հարցում: Մասնագիտական կողմնորոշման համակարգը համալսարանում ներառում է՝

Կ.տ.

ա. դիմորդների մասնագիտական կողմնորոշման տեղեկացում և մասնագիտության ընտրություն.
բ. մասնագիտական կողմնորոշման խորհրդատվության տրամադրում.
գ. աշխատաշուկայի և աշխատատեղերի վերաբերյալ խորհրդատվության և տեղեկատվության ապահովում:
2) Մասնագիտական կողմնորոշումն իրականացվում է դիմորդների ներգրավման, համալսարանի մրցունակության բարձրացման, մասնագիտական կողմնորոշման հանձնաժողովի և ամբիոնների գործունեության ակտիվացման, դիմորդների շրջանում ապագա մասնագիտությունների մասնագիտական կողմնորոշման նպատակով:
3) համալսարանի մասնագիտական կողմնորոշման խնդիրներն են՝
ա. հիմնական, միջնակարգ, ավագ դպրոցների հետ համագործակցության կազմակերպում և իրականացում.
բ. ուսանողների համակազմի ձևավորման ապահովում.
գ. շրջանավարտների շրջանում խորհդատվության և տեղեկատվության տրամադրում առկա աշխատաշուկայի վիճակի, աշխատատեղերի վերաբերյալ:
4) համալսարանի կողմից անցկացվող մասնագիտական կողմնորոշման հիմնական միջոցառումներն են՝
ա. դպրոցներում մասնագիտական կողմնորոշման խորհրդատվությունների կազմակերպում և անցկացում.
բ. դպրոցներում համալսարանի մասնագիտությունների վերաբերյալ տեղեկատվության ապահովում.
գ. դպրոցների տնօրենների հետ փոխգործունեության ապահովում և զարգացում.
դ. ընդունելության կարգերի վերաբերյալ տեղեկատվության ապահովում հասարակության շրջանում:
5) Տվյալ միջոցառումներն իրականացնելու համար Գորիսի պետական համալսարանը կատարում է հետևյալ քայլերը՝
ա. համագործակցող դպրոցների շրջանակի ընդլայնում.
բ. դպրոցներում մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ խորհրդատվությունների անցկացում.
գ. աշակերտների և դիմորդների այցելությունների և հանդիպումների կազմակերպում.
դ. գովազդային նյութերի պատրաստում դիմորդների համար՝ բուկլետների, ինֆորմացիոն նյութերի, գովազդային թերթիկների տեսքով.
ե. շրջանավարտների շրջանում տեղեկատվության և խորհրդատվության ապահովում՝ աշխատատեղերի և աշխատանքի տեղավորման հարցերի շուրջ:
22. Սույն ընթացակարգն ունի հավելված, որն հանդիսանում է ընթացակարգի անբաժանելի մասը:
23.Սույն ընթացակարգով չկարգավորված հարցերը կարգավորվում են ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերով:
24. Սույն ընթացակարգն ուժի մեջ է մտնում գիտական խորհրդի հաստատումից հետո:

ԳՊՀ ռեկտորի պարտականությունները կատարող՝ Թեհմինա Մարության

/_____/ կ.տ.

Հավելված

ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ

Էլեկտրոնային հղում՝ *https://bit.ly/3uaywgo*

Հարցազրույցի օրը/ամիսը/տարին --- / --- / -

Սիրելի՛ դիմորդ, կրթական միջավայրի և կրթության որակի բարելավման նպատակով Գորիսի պետական համալսարանը իրականացնում է դիմորդների կարիքների և պահանջների ուսումնասիրում և գնահատում:

Խնդրում ենք Ձեզ մասնակցել այս հարցմանը:

Ձեր տվյալներն անանուն են և չեն տարածվելու, ստացված արդյունքներն օգտագործվելու են միայն ընդհանրացված, վիճակագրական տվյալների ձևով: Նախապես հայտնում ենք մեր երախտագիտությունը Ձեր տրամադրած ժամանակի և ցուցաբերած անկեղծության համար:

Պատասխանելով հարցաթերթիկին՝ ընտրեք այն պատասխանները, որոնք համապատասխանում են Ձեր կարծիքին:

Նշեք խնդրեմ Ձեր սեռը

Արական ☐ Իգական ☐

Նշեք խնդրեմ Ձեր ծննդյան թիվը / /

Դուք սովորում եք

<< Սյունիքի մարզի ---------- համայնք/գյուղ

------ դպրոցում ---------- դասարանում

	1. Դուք համարվում եք
☐	Միջնակարգ դպրոցի շրջանավարտ
☐	Ավագ դպրոցի շրջանավարտ
☐	Վարժարանի/քոլեջի շրջանավարտ
☐	Նախորդ տարիների շրջանավարտ
	2. Ձեր առաջադիմությունը դպրոցում
☐	գերազանցիկ
☐	հարվածային
☐	այլ _____
	3. Որոշե՞լ եք, որ բարձրագույն ուսումնական հաստատությունն եք դիմելու՝ ընդունվելուհամար
☐	Գորիսի պետական համալսարան
☐	Այլ համալսարան
☐	Չեմ կողմնորոշվել
	4. Ուսուցման ո՞ր ձևն եք նախընտրում
☐	Առկա
☐	Հեռակա
	5. Ուսումնական հաստատությունը ընտրելիս ի՞նչն եք համարում կարևոր
☐	Համալսարանի գտնվելու վայրը
☐	Համալսարանի հեղինակությունը
☐	Համալսարանում անհրաժեշտ մասնագիտությունների առկայությունը
☐	Ուսման վարձի չափը
☐	Այլ _____
	6. Համալսարան ընդունվելու համար լրացուցիչ պարապմունքների կարիք ունե՞ք
☐	Այո
☐	Ոչ
	7. Ուսուցման ավարտին ի՞նչ կուզենայիք ստանալ
☐	Տվյալ մասնագիտությամբ աշխատելու համար անհրաժեշտ գիտելիքներ
☐	Ուղղակի ստանալ դիպլոմ
☐	Ապագայում աշխատանք ունենալու հնարավորություն
☐	Այլ _____

8. Ի՞նչ աղբյուրներից եք իմացել Գորիսի պետական համալսարանի մասին	
☐	Ծանոթների միջոցով
☐	Համալսարանի ներկայացուցչի միջոցով
☐	ԶԼՄ-երի միջոցով
☐	Համացանցի միջոցով
☐	Այլ _____
9. Եթե ընտրել եք մեր համալսարանը, ապա ինչու՞	
☐	Ծանոթներն են խորհուրդ տվել
☐	Ծնողներն են որոշել
☐	Նախընտրած մասնագիտության առկայության համար
☐	Այլ _____
11. Եթե ընտրել եք համալսարանում մասնագիտություն, արդյոք պատկերացնում ե՞ք դրա առանձնահատկությունները	
☐	Այո
☐	Ոչ
☐	Այլ _____
12. Արդյոք հասանելի՞ է ձեզ ԳՊՀ ընդունվելու և սովորելու վերաբերյալ ինֆորմացիան	
☐	Այո
☐	Ոչ

13. ԳՊՀ-ի ո՞ր մասնագիտությամբ կցանկանայիք սովորել (ընդգծել)	
☐	Անգլերեն լեզու և գրականություն (առկա)
☐	Կերպարվեստ (առկա / հեռակա)
☐	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա (առկա / հեռակա)
☐	Կենսաբանություն (առկա)
☐	Քիմիա (հեռակա)
☐	Մաթեմատիկա (առկա / հեռակա)
☐	Պատմություն (առկա / հեռակա)
☐	Հայոց լեզու և գրականություն (առկա / հեռակա)
☐	Ֆիզիկա (հեռակա)
☐	Տնտեսագիտություն (առկա / հեռակա)
☐	Կառավարում (Ըստ ոլորտների) (առկա / հեռակա)
☐	Իրավագիտություն (հեռակա)
☐	Դեղագործական քիմիա (հեռակա)
☐	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա (առկա)
☐	Էլեկտրոնիկա (հեռակա)
☐	Էլեկտրաէներգետիկա (հեռակա)
14. Ինչու՞ կցանկանայիք սովորել նշված մասնագիտությամբ	
☐	Դուր է գալիս այդ մասնագիտությունը
☐	Ապագայում հեշտ է ընդունվել աշխատանքի
☐	Արդիական ոլորտ է

☐	Բարձր վարձատրվող ոլորտ է
☐	Այլ _____

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՑՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ